



ERIC GARCETTI
MAYOR

ԳՈՐԾԱԴԻՐ ՀՐԱՅԱՆԳ ԹԻՎ 32

Թողարկման ամսաթիվ – Դեկտեմբեր 16, 2021

Թեմա՝ Լոս Անջելես քաղաքում լեզվի հասանելիության ուժեղացում

Լոս Անջելեսը պատկանելիության վայր է, որտեղ աշխարհի բոլոր անկյուններից եկած մարդիկ հանգիստ կարող են երազանքներ հետապնդել, ընտանիքներ ստեղծել և մեր Քաղաքի կյանքի և պատմության մեջ դրական ներդրում ունենալ:

Մեր բազմազանության ամենաակնառու նշաններից մեկը Լոս Անջելեսի տարածքում օգտագործվող լեզուների զգալի մեծ քանակն է (ըստ որոշ հաշվարկների ավելի քան 220 լեզու) և առավելություններն ու մարտահրավերները, որոնք կապված են բազմալեզու համայնքների տնտեսական, մշակութային, սոցիալական և քաղաքական բարեկեցությունը պաշտպանելու հետ: Այն անհատները, որոնց համար անգլերենը հիմնական խոսակցական լեզուն չէ և ովքեր ունեն անգլերեն կարդալու, խոսելու, գրելու կամ հասկանալու սահմանափակ կարողություններ, կոչվում են անգլերեն սովորողներ (ELL): Այդ անվանումը վերաբերում է մեր քաղաքի ավելի քան 538,800 ներգաղթյալ բնակիչներին, որոնք ներկայացնում են Լոս Անջելեսի ներգաղթյալների ավելի քան 37%-ը:

Ես հիմնեցի Քաղաքապետարանի՝ ներգաղթյալների հարցերով վարչությունը, որը պետք է աջակցի և արագացնի ներգաղթյալների ինտեգրման գործընթացը քաղաքային ծառայությունների համակարգման, իրազեկման և շահերի պաշտպանության միջոցով, և նպատակ ունեմ ավելի հավաստիանալու, որ բոլոր Լոս Անջելեսցիները՝ անկախ ներգաղթյալի կարգավիճակից կամ լեզվից, կունենան բոլոր հավասար հնարավորությունները օգտվելու համայնքային ռեսուրսներից, պետական ծառայություններից, ներգրավվելու քաղաքացիական կյանքում և տեղեկացված լինելու օրենքների և քաղաքական նախաձեռնությունների մասին, որոնք ուղղակիորեն ազդում են իրենց կյանքի վրա:

Մեր ժողովրդի վրա համավարակի ազդեցությունը ընդգծեց այս աշխատանքի կենսական կարևորությունը, ինչպես նաև մասնագիտացված և բարձրորակ լեզվական



ծառայություններ մատուցելու վստահելի, կենտրոնացված միջոցների կիրառման հրատապությունը: Ժամանակի պահանջն է, որ մենք ինստիտուցիոնալացնենք իմ վարչակազմի լեզվի հասանելիության քաղաքականությունն ու գործելակերպը՝ Լոս Անջելեսում հիմնելով լեզուների հասանելիության համաքաղաքային ծրագիր, որը կենտրոնացած է հավասարության և ապագա առաջընթացի հիմքերի ամրացման վրա, սահմանում է հստակ ուղիներ մեր ունեցած յուրահատուկ ձեռքբերումները պահպանելու համար:

Լոս Անջելեսում լեզվի հասանելիության համաքաղաքային ծրագիր ստեղծելու մեր շարունակական ջանքերին աջակցելու համար սույնով հրահանգում եմ հետևյալը.

1. Ստեղծել լեզվական հասանելիության ուղեցույցային պլան (Յիմնական Պլան), որը հիմք կհանդիսանա լեզվի հասանելիության և հասանելի հաղորդակցման համաքաղաքային ծրագրի համար և կծառայի որպես մոդել Քաղաքային Վարչությունների համար: Քաղաքապետարանի ներգաղթյալների հարցերով վարչությունը կգլխավորի մինչև 2021-2022 ֆինանսական տարվա ավարտը Յիմնական Պլանի ստեղծման աշխատանքները: Յիմնական Պլանը պետք է համապատասխանի կիրառվող իրավական պահանջներին և սահմանի այն քաղաքականությունն ու գործողությունները, որոնք Քաղաքապետի աշխատակազմը ձեռնարկում է, որպեսզի ապահովի իմաստավորված հասանելիություն տեղեկատվությանը, ծրագրերին և ծառայություններին, այդ թվում նաև հավելյալ ծառայություններին: Յիմնական Պլանը պետք է ծառայի որպես լեզուների հասանելիության համաքաղաքային ծրագրի հիմնարար փաստաթուղթ և դառնա Քաղաքային Վարչությունների լեզուների հասանելիության մասնավորեցված պլանների մոդել, ինչպես նկարագրված է ստորև մաս 3-ում:

ա. Յիմնական Պլանը պետք է պարբերաբար թարմացվի Լեզուների Հասանելիության Համաքաղաքային Համակարգողի կողմից, ինչպես նշված է ստորև մաս 2-ում, և ինչպես պահանջվում է օրենքով, ինչպես նաև պայմանավորված է բնակչության փոփոխությամբ: Յիմնական Պլանի բոլոր թարմացումները կիրապարակվեն քաղաքապետարանի կայքում:

բ. Յիմնական Պլանը պետք է սահմանի լեզուների հասանելիության համաքաղաքային ծրագրի նպատակներն ու չափորոշիչները, որոնք կարող են ուղեցույց ծառայել Քաղաքային Վարչություններին՝ սույն գործադիր հրահանգի նպատակներին հասնելու համար ապագա բյուջետային հայտերը նախապատրաստելիս:

2. Սահմանել Լեզուների Հասանելիության Համաքաղաքային Համակարգողի դերը: Յիմնական Պլանը պետք է սահմանի Լեզուների Հասանելիության Համաքաղաքային Համակարգողի (Համակարգողի) դերը քաղաքապետարանի կամ Քաղաքային այնպիսի Վարչության կազմում, որը կարող է ներառել Համակարգողին և լրացուցիչ օժանդակ անձնակազմին:

ա. Համակարգողը կղեկավարի լեզվի հասանելիության համաքաղաքային ծրագիրը՝ թարմացնելով Հիմնական Պլանը, վերահսկելով, որ այն իրականացվի և բավարարելով լեզուների հասանելիության համաքաղաքային կարիքները:

բ. Համակարգողը պետք է ուղղակիորեն աշխատի Քաղաքային Վարչությունների հետ՝ Գլխավոր Մենեջերների, Բաժինների/Վարչությունների Ղեկավարների և/կամ Լեզուների Հասանելիության Կապող Անձերի միջոցով, ինչպես սահմանված է ստորև 5-րդ մասով, հավաքագրի համապատասխան տեղեկատվություն, ներառյալ տվյալներ և փաստաթղթեր, որպեսզի համապատասխան թարմացումներ կատարի Հիմնական Պլանում, որ այն ծառայի բոլոր Լոս Անջելեսիցներին:

գ. Համակարգողը պետք է խորհրդատվություն տրամադրի Քաղաքի կողմից Լոս Անջելեսիցներին տրամադրված լեզվական հասանելիության ռեսուրսների մասին և լուծի առաջացող ցանկացած խնդիր՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով, լրացուցիչ ռեսուրսներով կամ անձնակազմով այս դերին աջակցելը:

3. **Քաղաքային Վարչությունները պետք է ստեղծեն լեզվի հասանելիության մասնավորեցված պլաններ (Վարչության պլաններ):** Քաղաքային Վարչությունները, որոնք չունեն լեզվի հասանելիության պլան, կարող են վերցնել Հիմնական Պլանում տրված ձևանմուշը և, ըստ անհրաժեշտության, փոփոխել այն՝ համապատասխանեցնելով վարչության կողմից մատուցվող ծառայություններին:

ա. Վարչության պլանը պետք է պարբերաբար թարմացվի, ինչպես պահանջվում է օրենքով, ինչպես նաև պայմանավորված է բնակչության փոփոխությամբ, և պետք է հրապարակվի Քաղաքային Վարչության կայքում:

4. **Քաղաքային Վարչությունները պետք է Լեզուների Հասանելիության Համաքաղաքային Համակարգողին գեկուցեն լեզուների հասանելիության ծրագրի մասին:** Քաղաքային բոլոր Վարչությունները պետք է կանոնավոր հաշվետվություն ներկայացնեն լեզուների հասանելիության ծրագրի վերաբերյալ, ինչպես նշված է Հիմնական Պլանում: Հաշվետու տվյալները պետք է ներառեն նյութերի և իրադարձությունների քանակը, որոնց համար վարչությունը տրամադրել է համապատասխան գրավոր և բանավոր թարգմանություն, և թե ինչ լեզուներով, լեզուների հասանելիության ծառայությունների հարցումների քանակը, ծառայությունների տեսակները և այն լեզուները, որոնց համար ծառայություններ են մատուցվել: Չեկույցը հանձնվում է Համակարգողին:

5. **Քաղաքային յուրաքանչյուր Վարչության համար նշանակել Լեզուների Հասանելիության Ծրագրի Կապող Անձ:** Քաղաքային բոլոր Վարչությունները պետք է նշանակեն Լեզուների Հասանելիության Ծրագրի Կապող Անձ, որը կ'ծառայի որպես Համակարգողի և Վարչության միջև կապող օղակ:

ա. Համակարգողին պետք է ծանուցվի այդ անձի անունը և կոնտակտային տվյալները (ներառյալ այն դեպքում, երբ տեղի է ունենում կադրային հետագա փոփոխություն կամ փոփոխություն տվյալ անձի կոնտակտային տվյալների մեջ):

բ. Լեզուների Հասանելիության Ծրագրի Կապող Անձը պետք է մասնակցի և ակտիվորեն ներգրավվի Աշխատանքային Խմբի հանդիպումներին, ինչպես նշված է ստորև 6(ա) մասում:

գ. Լեզուների Հասանելիության Ծրագրի Կապող Անձը պետք է ուղղակիորեն աշխատի Համակարգողի հետ՝ հավաքելով բոլոր համապատասխան տեղեկությունները՝ ներառյալ տվյալները և փաստաթղթերը, որպեսզի աջակցի Համակարգողի ջանքերին՝ արդիականացնելու Հիմնական Պլանը, ինչպես նշված է վերևում մաս 2 (ա)-ում:

6. **Ինստիտուցիոնալացնել արդեն գործող Լեզուների Հասանելիության Համաքաղաքային Աշխատանքային Խումբը:** Լեզուների Հասանելիության Համաքաղաքային Աշխատանքային Խումբը (Աշխատանքային Խումբը) կշարունակի կենտրոնանալ լեզուն սովորող Լոս Անջելեսցիների (ELL) համար Քաղաքի հետ կապված տեղեկատվության, ծրագրերի և ծառայությունների հասանելիության բարելավման վրա, ինչպես սահմանվում է Հիմնական Պլանով:

ա. Աշխատանքային Խումբը կղեկավարի Համակարգողը և դրա աշխատանքներին կանոնավոր կերպով կմասնակցեն յուրաքանչյուր Քաղաքային Վարչության Լեզուների Հասանելիության Ծրագրի Կապող Անձինք:

Հրամանն արձակված է Դեկտեմբերի 16–ին, 2021

Էրիկ Գարսետտոյի
Քաղաքապետ